

Ծերանում ենք, Պարունյո Սևակ

Ծերանում ենք, սիրելի՛ս.-

Մեր ապստամբ մազերն արդեն կամ պատըժվել են մահով,

Կամ իշխանաց իշխան սանրի խեղճ հպատակ են դարձել.

Մեր խռովկան մատներն արդեն դարձել են հեզ ու լսկան,

Իսկ դավադիր մեր ոտքերը՝ ընտանեսեր - տնասեր...

Ծերանում ենք, Պարունյո Սևակ,

Ծերանում ենք, սիրելի՛ս.-

Մեկ օր խմում

Եվ երկու՛ օր արդեն խումար ենք ընկնում,

Մեկ ժամ քայլում

Եվ երկու՛ ժամ խոսում դրա օգուտից

Կամ վնասից,

Եվ ըստ որում խոսում այնպե՛ս լրջորեն,

Կարծես մի մեծ գյուտ ենք արել

Կամ հերքում ենք մի հին գյուտ.

Եվ «բուժվել» կամ «հիվանդություն» բառերն արդեն օրեցօր

Հոլովվում են ու խոնարհվում ավելի շատ և նույնիսկ

Առավել քիչ դժգոհությամբ,

Քան թե թաքուն պարծանքով...

Ծերանում ենք, Պարունյո Սևակ,

Ծերանում ենք, սիրելի՛ս.-

Թափառելու ժամ չի մնում,

Չենք հասցնում ձանձրանալ.

Քիչ ենք թախծում մենք անառիթ,

Շատ ենք տխրում առիթով.

Քիչ ենք կարդում, շատ ենք գրում,

Շատ ենք խորհում, քիչ քնում,

Որովհետև «անքնություն» բառը դարձել է սոսիսձ
Եվ ուզում է մեր քրքրված ջղերն իրար կպցնել...

Ծերանում ենք, Պարունյո Սևակ,

Ծերանում ենք, սիրելի՛ս,

Ծերանում ենք, սակայն կարծես

Դարձյալ խելքի չենք գալիս.-

Դեռ հիմա՛ էլ զարմանում ենք.

Դեռ կարող ենք զարմանալ

Ժամացույցի սլաքները ետ ենք տալիս մտովին,

Ինչ է թե մեր արդեն չարածն իբր անենք աշխարհում.

Անկարելի հաղթանակի ելք ենք ճարում ինչ - որ կերպ.

Երբեմն էլի այս աշխարհն ենք դեռ չափչփում հուսալից

Դո՛ւ - Կիսոտի ոտքեր կոչված նո՛ւյն կարկինով ծայրամաշ.

Իսկ երբ մեկը խոր քնի մեջ մեր երազն է կոխկոտում,

Առաջվա՛ պես ... առաջվա՛ պես վեր ենք ցատկում ճշալով...

Ծերանում ենք, Պարունյո Սևակ,

Սակայն... խելքի չենք գալիս...